ԻՆՏԵՐՆԵՏԸ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ ԵՎ ՓՈՔՐ ԲԻԶՆԵՍԸ

Վերջին տասնամյակում համաշխարհային տնտեսությունում ձևավորված միտումները պայմանավորված են փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) բուռն զարգացմամբ, որը հանդիսանում է ժամանակակից շուկայական համակարգի անբաժանելի մասը:

Հայաստանում 1991 թվականից սկսած շուկայական հարաբերություններին կտրուկ անցումը, ունեցավ ծանր սոցիալ տնտեսական հետևանքներ՝ տնտեսական անկում, գործազրկության աճ և այլն: Այնուամենայնիվ արդեն 1994 թվականից սկսած Հայաստանում գրանցվում է կայուն տնտեսական աճ, որը նախորդ տարի կազմեց 9.6%:

Գիտակցելով ՓՄՁ ոլորտի ընձեռած հնարավորությունները, հեռանկարները և նրա որոշիչ դերը երկրի տնտեսության համար ՀՀ կառավարությունը առանձնակի ուշադրություն է դարձնում այս ոլորտին և նրան ուղղված պետական աջակցմանը: Այսպես, Հայաստանում ՓՄՁ նկատմամբ պետական աջակցման հիմնական ուղղություններից է հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ միջավայրի ապահովումը՝ իրավաօրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով: Վերջին մի քանի տարիների ընթացքում այդ ուղղությամբ կատարվել է հսկայական աշխատանք՝ գործում է նոր քաղաքացիական օրենսգիրքը, ընդունված են մի շարք նոր օրենքներ, որոնք հանդիսանում են հիմնարար ինչպես ընդհանուր առմամբ տնտեսության, այնպես ել, մասնավորապես, ՓՄՁ ոլորտի համար:

Կարևոր և նշանակալի քայլ է հանդիսանում ՓՄՁ ոլորտի նկատմամբ «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի ստեղծումը, որը կհանդիսանա ՓՄՁ պետական քաղաքականության իրականացնողը Հայաստանում: Սա շատ կարևոր է, եթե հաշվի առնենք այն փաստը որ մինչ այժմ Հայաստանում բացակայում էր որևէ կառույց, որը կիրականացներ պետական քաղաքականությունը այս ոլորտում:

Այնուամենայնիվ, չնայած մի շարք դրական փոփոխությունների, ձեռնարկատերերը շարունակում են բախվել լուրջ դժվարությունների հետ,

որոնցից հատկապես առանձնանում են հետևյալները. ՓՄՁ գործունեության օրենսդրական բազայի անկատարությունը և անկայունությունը, նախնական կապիտալի և սեփական շրջանառու միջոցների սակավությունը, սկսնակ ձեռնարկատերերի նկատմամբ հատուկ մոտեցումների և հարկային արտոնությունների գրեթե բացակայությունը, բանկային վարկեր ստանալու հետ կապված դժվարությունները, խնդիրներ կապված արտադրանքի իրացման և արտաքին շուկաներ դուրս գալու հետ, ազգային բիզնես-տեղեկատվական և խորհրդատվական, ինչպես նաև բիզնես-կրթական համակարգերի բացակայությունը: Ձեռնարկատիրության աջակցման համակարգում դեռ ոչ ամբողջությամբ. են օգտագործվում նոր տեխնոլոգիաների հնարավորությունները: Ներքին շուկայի ոչ այդքան մեծ լինելու պատճառով բազմաթիվ ձեռնարկություններ չեն կարող աշխատել իրենց ունեցած արդյունավետության գործակցի սահմաններում, դեռ չեն ձևավորվել արտահանման խթանման արդյունավետ մեխանիզմներ և մոտեցումներ:

Ժամանակակից տնտեսական զարգացումը և գլոբալիզացումը բերեցին նրան, որ այժմ աշխարհը ապրում է և զարգանում է տեղեկատվական տնտեսությունում: Վերջին տաս տարիների զարգացման վերլուծությունները վկայում են, որ արագ տնտեսական աճ կարող են գրանցել միայն այն երկրները, որոնց տնտեսական զարգացումը հիմնված է ոչ թե հարաբերական առավելությունների վրա (բնական ռեսուրսներ, էժան աշխատուժ, բերքատու հող և այլն), այլ գիտելիքների, տեղեկատվության և արդյունավետ աշխատանքի վրա: Հենց դա է հանդիսանում հիմնական պատճառը, որ Հայաստանում բարձր տեխնոլոգիաների օգտագործումը հասարակական և տնտեսական կյանքի տարբեր ուղղություններում առաջնային է հանդիսանում: 2000թ. դեկտեմբերին կառավարությունը հայտարարեց այս ոլորտը Հայաստանի տնտեսության զարգացման համար գերակա ուղղություն և 2001թ. մայիսին ընդունեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հիմնադրույթներ» փաստաթուղթը: Արդեն այս տարի կընդունվի «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային ստորագրության» մասին ՀՀ օրենքը: 2001թ. հուլիսից ՀՀ վարչապետի գլխավորությամբ ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ, ձեռնարկությունների ինկուբատոր, որը մասնագիտանում է տեղեկատվական տեղնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների աջակցման գործում, գործում է ինֆորմացիոն տեղնոլոգիաների

ձեռնարկությունների միությունը: 2002թ. ապրիլին ԵՄ աջակցությամբ Երևանում անցկացվեց միջազգային գիտաժողով «Էլեկտրոնային զարգացումը Կովկասում» խորագրով, որոշված է տարածաշրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետների համար Հայաստանում միջազգային կրթական կենտրոնի ստեղծման հարցը:

Հայաստանում տեղեկատվական տեղնոլոգիաների հիմքերը դրվել էին դեռևս համակարգչային դարի սկզբից: Հետագայում Հայաստանը գտնվում էր նախկին Խորհրդային Միության տեխնոլոգիապես զարգացած երկրների առաջին շարքերում: Հայաստանում գործում էին մատ 200 գիտահետազոտական ինստիտուտներ, մի քանի տասնյակ հազարավոր բարձրորակ մասնագետներ, որոնք տալիս էին բարձրորակ արտադրանք և՝ տեխնիկական (hardwear) և՝ ծրագրային (softwear) ապահովման ոլորտներում: Այս ոլորտը համեմատաբար արագ կարողացավ հաղթահարել անցումային շրջանի դժվարությունները և արդեն 1999-2000թթ. գրանցեց նշանակալի աճ: 2001թ աշխարհի գրեթե բոլոր երկրներում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նկատվում էր ճգնաժամ, իսկ Հայաստանում, չնայած ճգնաժամի այս ոլորտում գրանցվեց մոտ 30% աճ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արդեն կայացած և համակարգված տեխնիկական (hardwear) և ծրագրային (softwear) ապահովման ենթաոլորտների հետ մեկտեղ սկսում է ձևավորվել և զարգանալ ինտերնետը և էլեկտրոնային առևտուրը:

Ձեռնարկությունների կողմից ինտերնետի օգտագործումը նպաստում է՝ տեղեկատվության ստացման օպերատիվության բարձրացմանը, ծախսերի նվազեցմանը, որոնք կապված են տեղեկատվության փոխանակման հետ ի հաշիվ հաղորդակցման ավելի էժան միջոցների օգտագործման, գործընկերների և հաճախորդների արագ տեղեկացմանը ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությամբ, վաճառքի այլընտրանքային աղբյուրների ձևավորմանը էլեկտրոնային խանութի միջոցով, էլեկտրոնային առևտրի ինտերնետ տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ընկերությանը ավելի բաց դառնալ հաճախորդների նկատմամբ:

Հայաստանում ձեռնարկությունները ապահովվում են ինտերնետով հիմնականում հեռախոսակապով և միայն նրանց շատ չնչին մասն է առանձնացված գծերով: Նվազ քանակությամբ ձեռնարկություններ ունեն իրենց վեբ-

էջերը ինտերնետում: Այժմ Հայաստանում գոյություն ունի մոտ 70 հազ. համակարգիչ որոնցից 35 հազ. օգտվում են ինտերնետից և ինտերնետային ինֆորմացիայի օգտագործման պահանջարկը ներքին շուկայում գնալով աճում է: Հայաստանի բնակչության յուրաքանչյուր 100 մարդու հաշվով համակարգիչներով ապահովվածությունը բավականին բարձր է: Գոյություն ունեն առևտրային կազմակերպություններ, որոնք կարող են ներկայացնել իրենց ապրանքները ինտերնետում, կան ձեռնարկություններ, որոնք էլեկտրոնային խանութների ստեղծման փորձ ունեն, ինչպես նաև ստեղծում են վեբ-սայթեր ԱՄՆ-ի, Կանադայի, Անգլիայի և այլ երկրների համար: Այնուամենայնիվ, շատ քիչ բացառություններով, ինչպես նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր երկրներում, այնպեսէլ Հայաստանում գրեթե զարգացած չէ էլեկտրոնային առևտուրը, գոյություն չունեն էլեկտրոնային վճարումների համակարգեր, գոյություն ունի միայն ոչ նշանակալի ցանցային ինֆորմացիոն ռեսուրսների որոշակի քանակ, որոնք նպաստում են ներդրումային ակտիվությանը, ոչ բոլոր երկրներում գոյություն ունեն օրենսդրության տեղեկատվական բազաներ առևտրի և բիզնեսի ոլորտներում անգլերեն և ռուսերեն լեզուներով: Այսպիսով ինտերնետ տեխնոլոգիաների օգտագործումը առևտրի և ձեռնարկատիրության զարգացման համար և նրանց ինտեգրացիան միջազգային տնտեսական միջավայրում հանդիսանում է առաջնային խնդիր երկրի տնտեսության համար:

Հայաստանը շարժվում է դեպի թվային դար և ավելի ու ավելի շատ ձեռնարկություններ են սկսում կախման մեջ գտնվել համաշխարհային տեղեկատվական ցանցից:

Ցանկացած երկրի ՓՄՁ ոլորտի և, մասնավորապես, Հայաստանի համար առանձնակի կարևորություն ունի ինտերնետը և էլեկտրոնային առևտուրը, որոնք ժամանակակից աշխարհում հանդիսանում են ձեռնարկատիրական գործունեության անբաժանելի մասը:

Վերջում կարելի է նշել, որ Հայաստանում դրված են բոլոր հիմքերը էլեկտրոնային առևտրի ստեղծման, ձևավորման և հետագա զարգացման համար: Համոզված եմ, որ վերը նշված ծրագրերի իրականացման արդյունքում արդեն ոչ այդքան հեռու ապագայում կզգացվեն դրական փոփոխություններ այս ուղղությամբ, ինչը իր հերթին կնպաստի փոքր բիզնեսի զարգացմանը: